ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/31

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Բողոք բերող՝ «Լոկատոր» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի ներկայացուցիչներ՝ Է. Գրիգորյանի, Կ. Կույումջյանի, Տ. Առուշանյանի, Վ. Ղազարյանի և Ա. Ղուկասյանի

«Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Հարությունյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցում, ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության ԱԳՆելով «Լոկատոր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 24.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Պատվիրատուին փոխել «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.02.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ հաստատված տեխնիկական բնութագիրը՝ վերացնելով բողոքով նշված թերությունները կամ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.02.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/31 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

02.03.2020թ.-ին, 11.03.2020թ.-ին և 25.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 11.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.03.2020թ.-ին:

2. «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լոկատոր» ՓԲԸ-ն 24.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 18.02.2020թ. թիվ 1 որոշմամբ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հայտարարվել է հրավեր (այսուհետև Հրավեր)՝ ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

Գտնում ենք, որ մրցույթի հրավերում նշված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին, այդպիսի տեխնիկական բնութագրով սահմանափակվում է այլ հնարավոր մասնակիցների մասնակցությունը մրցույթին և որի հետևանքով կարող են խախտվել անձանց ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Գնման առարկայի բնութագրերը՝

պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը...»:

Հրավերի բնութագրում նշված է՝ Համակարգի նկարագրություն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդահամարի անցկացման և բնակչության հաշվառման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել ծրագրային ու սերվերային միջոցներից կազմված համակարգ, որը ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) տվյալները համադրելով ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի սահմանահատումների տվյալների հետ:

Տեխնիկական բնութագրի տվյալ կետի պահանջներում նշված ծրագիրը մշակելու և ներդնելու համար մանրամասն նկարագրված չեն ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) և ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համապատասխան համակարգերի տվյալների բազաների կառուցվածքները, տվյալների փոխանակման ֆորմատները, համակարգերից տվյալների ստացման հնարավորությունները, ժամկետները և այլն:

Համակարգի նկարագրություն՝ Վարչական այլ տեղեկատվական շտեմարանների (ՀՀ ԱԳՆ, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱՆ ՔԿԱԳ և այլ) տվյալների կիրառությամբ իրական ժամանակում հստակեցնել ԲՊՌ-ում հաշվառված, սակայն ՍԷԿՏ համակարգում սահմանահատում չունեցող ՀՀ քաղաքացիների ՀՀ-ում գտնվելու/բացակայելու կարգավիճակը՝ մինչ 2020թ. հոկտեմբերի 18-ը (00 ժամի դրությամբ):

Տեխնիկական բնութագրի տվալ կետի պահանջների ապահովման համար հստակ նշված չէ վարչական այլ տեղեկատվական շտեմարանների ցանկը, դրանց տվյալների բազաների կառուցվածքը, տվյալների փոխանակման ֆորմատները, համակարգերից տվյալների ստացման հնարավորությունները, ժամկետները և այլն:

Համակարգի նկարագրություն՝ Այն քաղաքացիների ցուցակը, ում ՀՀ-ում գտնվելու/բացակայելու կարգավիճակը՝ մինչ 2020թ. հոկտեմբերի 18-ը (00 ժամի դրությամբ) անորոշ է: Պետք է ապահովվի կարգավիճակի ճշգրտման պարագայում (սահմանահատման փաստ, կամ որևէ այլ գործողություն, որը թույլ է տալիս հստակեցնել կարգավիճակը, օրինակ նոր անձնագրի ստացում ՀՀ տարածքում կամ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունում և այլն), դրա ինքնաշխատ եղանակով շտկումը համակարգում:

Տեխնիկական բնութագրի տվյալ կետի պահանջներում նշված համապատասխան համակարգում տվյալների ինքնաշխատ եղանակով շտկումը ապահովելու համար նկարագրված չեն օգտագործողների տեսակներ, որոնք ունենալու են այդ գործողության իրավունքը, տվյալների անհամապատասխանության դեպքում համակարգի աշխատանքի բնույթը, ինքնաշխատ եղանակով մուտքագրում իրականացող աշխատակիցների քանակը (համապատասխան ստորաբաժանում), նրանց աշխատանքային պարտականությունները, մուտքագրվող տվյալների կառուցվածքը և այլն:

Տեղեկատվական համակարգի մշակումը ըստ փուլերի՝

I փուլի աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է կարգաբերել, ինչպես նաև լրացնել ԲՊՌ-ից ՍԷԿՏ համակարգ փոխանցվող հետևյալ տվյալները.

ԲՊՌ-ում կարգավորել միևնույն անձանց կրկնակի հասցեներում գրանցումների դեպքերը,

Արտերկրում ՀՀ ԱԳՆ հյուպատոսարաններից և դիվանագիտական ներկայացչություններից ստացված անձնագրային գործարքների դեպքում, որոնք ներկայումս իրականացվում են ՀՀ ոստիկանության ԱՎՎ 001-ի կողմից, ԲՊՌ-ում անհրաժեշտ է կատարել ծրագրային փոփոխություն՝ լրացուցիչ նշումներ (օրինակ Ֆրանսիա, Մարսել) կատարելու և ՍԷԿՏ համակարգ փոխանցելու նպատակով:

Տեխնիկական բնութագրի տվյալ կետի պահանջում նշված ԲՊՌ-ում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների, տվյալների կարգաբերումների և ՍԷԿՏ համակարգ փոխանցելու աշխատանքներ իրականացնելու համար նշված չեն աշխատանքների ծտվյալները, համապատասխան ԲՊՌ-ի ծրագրի տեխնիկական տվյալները, կառուցվածքը, համակարգում փոփոխություններ կատարելու հնարավորությունների տրամադրման ժամկետները, ԲՊՌ-ի ծրագրի և ՍԷԿՏ համակարգի միջև տվյալների փոխանցման ֆորմատները և այլն:

Տեղեկատվական համակարգի մշակումը ըստ փուլերի՝

Ապահովել բնակչության մասին վիճակագրական հաշվետվությունների ստացումն ըստ անհրաժեշտ սեռատարիքային բաշխման, ՀՀ վարչատարածքային միավորների, մեկ տարի և ավել ժամկետով բացակայող ՀՀ քաղաքացիների, մեկ տարի և ավել ժամկետով ՀՀ-ում բնակվող օտարերկրացիների (և այլն) վերաբերյալ, որոնց ձևաչափերը կտրամադրվեն լրացուցիչ (20 հաշվետվություն):

Տեխնիկական բնութագրի տվյալ կետի պահանջների ապահովման համար նշված չեն հաշվետվությունների ձևաչափերը և տրամադրման ժամկետները:

Տեղեկատվական համակարգի մշակումը ըստ փուլերի՝

Մշակել հնարավորություն (ծրագրային մոդուլ) նախորդ կետով համակարգից դուրս բերված ցանկերով իրականացված ընտրանքային հետազոտության՝ անհատապես կատարված հարցումային աշխատանքների արդյունքները/ցուցանիշները կիրառել ամբողջ համակարգի տվյալների վրա:

Տեխնիկական բնութագրի տվյալ կետի պահանջների ապահովման համար հստակ նշված չեն ընտրանքային հետազոտության՝ անհատապես կատարված հարցումային աշխատանքների արդյունքների/ցուցանիշների տվյալների կառուցվածքը, համակարգ մուտք անելու կարգը և այլն:

Տեղեկատվական համակարգի մշակումը ըստ փուլերի՝

Մարդահամարի հաշվառման համակարգը առանձին սերվերի վրա (կամ վիրտուալ տարածքում) անհրաժեշտ ծրագրային ապահովման միջոցներով համալրված համակարգ է:

Տեխնիկական բնութագրի տվյալ կետի պահանջների ապահովման համար հստակ նշած չեն ծրագրի աշխատանքի համար սերվերային համակարգիչների կամ վիրտուալ տարածքի վերաբերյալ տվյալները:

Տեղեկատվական համակարգի մշակումը ըստ փուլերի՝

Ապահովել տեղեկատվական համակարգի տվյալների արխիվացումը և պահպանումը:

Տեխնիկական բնութագրի տվյալ կետի պահանջների ապահովման համար նշված չեն պայմանները և ժամկետները:

Տեխնիկական բնութագրում բացակայում են նաև ծրագրի մշակման և ներդրման համար անհրաժեշտ հետևյալ տվյալները՝

Հստակ նկարագրված չեն ծրագրի ֆունկցիոնալ հնարավորությունները:

Հստակ նշված չեն ծրագրի ներդրման և ծրագրի աշխատանքի ուսուցման պայմանները և ժամկետները:

Ծրագիրը օգտագործող կառույցները և համապատասխան օգտագործողների (user) տեսակները, քանակները և նրանց ծրագրի հետ աշխատանքի ֆունկցիոնալ հնարավորությունները:»:

Ելնելով վերոգրյալից, «Լոկատոր» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել Պատվիրատուին փոխել «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.02.2020թ.-ի թիվ 1 որոշմամբ

հաստատված տեխնիկական բնութագիրը՝ վերացնելով բողոքով նշված թերությունները կամ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ի լրումն ներկայացված բողոքի, «Լոկատոր» ՓԲԸ-ն 04.03.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վիճակագրական կոմիտեի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից ներկայացված դիրքորոշման մեջ նշված հանգամանքները համադրելով բողոքում, ինչպես նաև սույն պատասխանում նշված փաստական հանգամանքների հետ, կարծում ենք, որ բողոքն ենթակա է բավարարման, ներքոնշյալ փաստերի ուժով նաև, որոնք բացառում են Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշման մեջ նշված փաստերը.

1. Ծրագրի մշակման, ներդման և ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) և ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համապատասխան համակարգերի հետ ինտեգրման համար աշխատանքի ծավալները գնահատելու համար պարտադիր են փոխանակվող տվյալների բազաների կառուցվածքները, ինչպես նաև Վիճակագրական կոմիտեի դիրքորոշման մեջ նշված օրենքները չեն արտացոլում նշված համակարգերից նոր մշակվող ծրագիր տվյալների ստացման հնարավորությունները և ժամկետները: Պատվիրատուն պարտավոր է նշել վարչական այլ տեղեկատվական շտեմարանների ցանկը, դրանց փոխանակվող տվյալների բազաների կառուցվածքը, տվյալների փոխանակման ֆորմատների ստանդարտները, համակարգերից տվյալների ստացման հնարավորությունները, ժամկետները և այլն:

2. Պատվիրատուն տեխնիկական բնութագրում նշել է կատարվելիք աշխատանքներ, որոնք իրականում կատարվելու են ոչ այս պայմանագրի շրջանակներում և այլ կազմակերպության կողմից, որով առաջացրել է շփոթություն և կատարվելիք աշխատանքների ծավալի գնահատման դժվարություն:

3. Հաշվետվությունների ձևաչափերը և տրամադրման ժամկետները Համակարգի մշակման աշխատանքների ծավալների գնահատման համար ունեն էական նշանակություն:

4. Տեխնիկական բնութագրի՝ Մշակել հնարավորություն (ծրագրային մոդուլ) նախորդ կետով համակարգից դուրս բերված ցանկերով իրականացված ընտրանքային հետազոտության՝ անհատապես կատարված հարցումային աշխատանքների արդյունքները/ցուցանիշները կիրառել ամբողջ համակարգի տվյալների վրա, տվյալ կետի պահանջների ապահովման համար հստակ նշված չեն ընտրանքային հետազոտության՝

անհատապես կատարված հարցումային աշխատանքների արդյունքների/ցուցանիշների համակարգ մուտք անելու կարգը և համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները:

5. Դիրքորոշման հետևյալ կետը չի արտացոլում համակարգի միջերեսի (ինտերֆեյսի) աշխատանքի ֆունկցիոնալ հնարավորությունները՝ օգտվողների ծրագրի հետ աշխատանքի ֆունկցիոնալ հնարավորությունները:

6. Ծրագրի աշխատանքի ուսուցման համար պետք է նշվեն օգտվողների քանակները:

7. Համակարգի մշակման IV փուլի 16-18 կետերում հստակ նկարագրված չեն ծրագիրն օգտագործող կառույցները և համապատասխան օգտագործողների տեսակները, քանակները և նրանց ծրագրի հետ աշխատանքի ֆունկցիոնալ հնարավորությունները:»:

3. <u>ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.02.2020թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ վիճակագրական կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 24.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

Պատվիրատուն 26.02.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է, որ ներկայացնում է «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Լոկալ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ Վիճակագրական կոմիտեի /միջգերատեսչական ներկայացվածությամբ ստեղծված պատասխանատու ստորաբաժանման անդամների համատեղ քննարկման արդյունքում ձևավորված/ դիրքորոշումը և անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ըստ Պատվիրատուի, ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ հրավեր) տեխնիկական բնութագիրը կազմված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան և տեխնիկական բնութագրով

չեն սահմանվել կատարման միջոցները, ինչը ոչ թե խոչընդոտում, այլ ընդլայնում է հնարավոր մասնակիցների շրջանակը:

«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ Վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) ներկայացնում է իր դիրքորոշումը.

Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ծրագրի մշակման ընթացքում ԲՊՌ և ՍԷԿՏ համակարգերի տվյալների բազաների, ինչպես նաև Վարչական այլ տեղեկատվական շտեմարանների ամբողջական կառուցվածքները ներկայացումը նպատակահարմար չի համարվել, քանի որ տվյալների փոխանակման ֆորմատները պետք է ընտրվեն միջազգային ստանդարտներին հւսմապատասխան, որևէ սահմանափւսկում Պատվիրատուի կողմից չի դրվել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԲՊՌ և ՍԷԿՏ համակարգերից և Վարչական ւսյլ տեղեկատվական շտեմարաններից տվյալները և գործունակության հնարւսվորությունները, ժամկետները սահմանված են ՀՀ օրենսդրությամբ («Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2006թ. հունիսի 22-ի թիվ 884-Ն որոշում):

Համակարգում տվյալներն ապահովվելու և մուտքագրվելու են ինքնաշխատ կերպով (ավտոմատ), այսինքն աշխատակիցների անհրաժեշտություն չի ծագելու:

Հրավերի տեխնիկական բնութագրում նշված չեն ԲՊՌ-ում անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների, տվյալների կարգաբերումների և ՍԷԿՏ համակարգ փոխանցելու աշխատանքներ իրականացնելու հւսմար աշխատանքների ծավալները, համապատասխան ԲՊՌ-ի ծրագրի տեխնիկական տվյալները, կառուցվածքը, համակարգում փոփոխություններ կատարելու հնարավորությունների տրամադրման ժամկետներ, քանի որ նշված աշխատանքները կատարվելու են ԲՊՌ համակարգը վարողների կողմից: Կատարվելիք աշխատանքների վերաբերյալ նշվել է հրավերի տեխնիկական բնութագրում, քանի որ դրանք կատարվելու են համակարգի մշակման 1 փուլին զուգահեռ:

Հաշվետվությունների ձևաչափերը տրամադրվելու են լրացուցիչ, քանի որ Համակարգի մշակման ընթացքում հաշվետվությունների ձևաչափը չունի էական նշանակություն, դրանք ձևավորվեյու են Կատարողի կողմից արդեն իսկ Համակարգի մշակման 1 փուլում ստեղծված լոկալ բազաներում առկա տվյալների հիման վրա և այստեղ որոշիչ դերը ձևաչափերի քանակն է, որը սահմանվել է Պատվիրատուի կողմից:

Ընտրանքային հետազոտության՝ անհատապես կատարված հարցումային աշխատանքների արդյունքների/ցուցանիշների տվյալների կառուցվածքը նշելու

անհրաժեշտություն չկա, քանի որ բոլոր հարցումային ցուցանիշների համար գործում է ձևավորման միևնույն սկզբունքը:

Մարդահամարի հաշվառման համակարգը առանձին սերվերի վրա (կամ վիրտուալ տարածքում) անհրաժեշտ ծրագրային ապահովման միջոցներով համալրված համակարգ է, ծրագրի աշխատանքի համար սերվերային համակարգիչների կամ վիրտուալ տարածքի վերաբերյալ տվյալներ չեն նշվել, քանի որ Պատվիրատուի կողմից ոչ մի սահմանափակում չի դրվել մասնակիցների համար, և ընտրությունը կարող է կատարել մասնակիցը, և Պատվիրատուի կողմից Կատարողին կտրամադրվեն տվյալներն ըստ անհրաժեշտության:

Համակարգի տվյալների արխիվացման և պահպանման պարբերականության համար ժամկետ սահմանելը ծրագրի մշակման փուլում էական ցուցանիշ չէ:

Համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունը իրենից ներկայացնում է հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված համակարգի մշակման փուլերում ներկայացված գործընթացների ամբողջությունը:

Հրավերի տեխնիկական բնութագրոում նշում չի արվել ծրագրի աշխատանքի ուսուցման պայմանների և ժամկետների վերաբերյալ, քանի որ ծրագիրը ներդնելուց հետո տեխնիկական բնութագրով սահմանված է երաշխիքային սպասարկման ժամկետ:

Պատվիրատու կողմից ծրագրի ներդրման որևէ սահմանափակում չի դրվել, և դրա հետ կապված կապահովվեն բոլոր պայմանները:

Ծրագիրը օգտագործող կառույցները և համապատասխան օգտագործողների տեսակները, քանակները և նրանց ծրագրի հետ աշխատանքի ֆունկցիոնալ հնարավորությունները նկարագրված են Համակարգի մշակման IV փուլի 16-18 կետերում:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.02.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Տեխնիկական բնութագիրը
Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարդահամարի հաշվառման և վիճակագրական հաշվետվությունների ստացման **<u>Ծրագրային ապահովման մշակման ծառայություններ</u>** ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) և Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի սահմանահատումների տվյալների համադրման և արդյունքների վերլուծության միջոցով Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարդահամարի անցկացման և բնակչության քանակի հաշվառման տեղեկատվական համակարգի նպատակն է ապահովել ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N1115-Ն որոշման պահանջները՝ 2020 թվականին ՀՀ-ում հերթական մարդահամարի անցկացումը, իսկ հետագայում՝ իրական ժամանակում, ապահովել Հայաստանի բնակչության մասին ճշգրիտ և մանրամասն տեղեկատվության ստացումը: Համակարգի մշակման արդյունքում պետք է հնարավոր լինի օրվա դրությամբ ճշգրիտ գնահատել ՀՀ-ում գտնվող բնակչության՝ ՀՀ քաղաքացիների և օտարերկրացիների, քանակական ցուցանիշները, այդ թվում ԲՊՌ-ում առկա անվանական տվյալներն ըստ սեռատարիքային բաշխվածության: **<u>ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>** Հայաստանի Հանրապետությունում մարդահամարի անցկացման և բնակչության հաշվառման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել ծրագրային ու սերվերային միջոցներից կազմված համակարգ, որը ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) տվյալները համադրելով ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի սահմանահատումների տվյալների հետ պետք է ապահովի. ՀՀ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ցուցակ և համապատասխան վիճակագրական տվյալներ՝ ըստ տեղաշարժվող բնակչության վերջին սահմանահատման ամսաթվի և ուղղության, ելքային սահմանահատողների դեպքում՝ ՀՀ-ից ելքի ժամկետի (մարդահամարի հաշվառման պահի դրությամբ բացակայության տևողության), Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ցուցակ և համապատասխան վիճակագրական տվյալներ՝ ըստ ՀՀ մուտքի վերջին սահմանահատման ամսաթվի, ուղղության, մարդահամարի հաշվառման պահի դրությամբ՝ ՀՀ-ում գտնվելու տևողության, ՍԷԿՏ համակարգից տեղեկատվություն այն օտարերկրացիների վերաբերյալ, ովքեր մարդահամարի հաշվառման պահի դրությամբ գտնվում են ՀՀ-ում մեկ տարի կամ Համակարգի օգտվողների կողմից սահմանված այլ ժամանակահատվածում (0-≤3, 3-12, ≥12 և այլն), Վարչական այլ տեղեկատվական շտեմարանների (ՀՀ ԱԳՆ, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱՆ ՔԿԱԳ և այլ) տվյալների կիրառությամբ իրական ժամանակում հստակեցնել ԲՊՌ-ում հաշվառված, սակայն ՍԷԿՏ համակարգում սահմանահատում չունեցող ՀՀ քաղաքացիների ՀՀ-ում գտնվելու/բացակայելու կարգավիճակը՝ մինչ 2020թ. հոկտեմբերի 18-ը (00 ժամի դրությամբ): Այն քաղաքացիների ցուցակը, ում ՀՀ-ում գտնվելու/բացակայելու կարգավիճակը՝ մինչ 2020թ. հոկտեմբերի 18-ը (00 ժամի դրությամբ) անորոշ է: Պետք է ապահովվի կարգավիճակի ճշգրտման պարագայում (սահմանահատման փաստ, կամ որևէ այլ գործողություն, որը թույլ է տալիս հստակեցնել կարգավիճակը, օրինակ նոր անձնագրի ստացում ՀՀ տարածքում կամ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունում և այլն), դրա ինքնաշխատ եղանակով շտկումը համակարգում: Մարդահամարի հաշվառման կամ Համակարգի օգտվողների կողմից սահմանված այլ պահի դրությամբ՝ Բնակչության պետական ռեգիստրի տվյալները (անձի նույնականացման ծածկագիր՝ ՀԾՀ, անուն, ազգանուն, հայրանուն, կարգավիճակ, քաղաքացիության երկիր, ծննդյան օր, ամիս, տարի, ծննդավայր, սեռ, ազգությունը) համադրելով ՍԷԿՏ համակարգում կուտակվող սահմանահատումների տվյալների հետ, պետք է ապահովեն ՀՀ-ում բնակչության ընթացիկ վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացումը: **<u>ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ</u>** **Մշտական բնակչության թվաքանակը.** ներառում է Համակարգի օգտվողների կողմից սահմանված ամսաթվի դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) տվյալ բնակավայրում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և մինչև մեկ տարի ժամկետով բացակայող անձանց թվաքանակը: **Առկա բնակչության թվաքանակը.** ներառում է Համակարգի օգտվողների կողմից սահմանված ամսաթվի

դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) տվյալ բնակավայրում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր (մինչև մեկ տարի ժամկետով) ներկա անձանց թվաքանակը:
Ժամանակավոր բացակա բնակչություն են համարվում՝ մարդահամարի հաշվառման պահի դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) իրենց հիմնական (մշտական) բնակության վայրից մինչև մեկ տարի ժամկետով բացակայողները:
Ժամանակավոր ներկա բնակչություն են համարվում մարդահամարի հաշվառման պահի դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) տվյալ վայրում ոչ ավել քան մեկ տարի ժամկետով ներկա գտնվողները, ովքեր մշտապես չեն բնակվողում տվյալ վայրում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՒԼԵՐԻ

Համակարգի մշակման I փուլ

1. ՀՀ-ում մարդահամարի վերաբերյալ վիճակագրական տվյալներ ստանալու նպատակով անհրաժեշտ է ՍԷԿՏ համակարգի շրջանակներում մշակել առանձին տեղեկատվական համակարգ (ենթահամակարգ)՝ ծրագրային ապահովման միջոց, որը ՀՀ քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում, համադրելով ՍԷԿՏ համակարգի սահմանահատումները ԲՊՌ-ում առկա տվյալների հետ, կցուցադրի Հայաստանում գտնվող ՀՀ բնակչության վերաբերյալ թվերը և այլ տվյալները՝ առանձնացնելով մեկ տարի և ավել բացակայողների տվյալները, իսկ օտարերկրացիների դեպքում՝ վերլուծելով ՍԷԿՏ համակարգում առկա օտարերկրացիների սահմանահատումները, կցուցադրի օտարերկրացիների ցուցակը և թվաքանակը՝ առանձնացնելով այն օտարերկրացիներին, ովքեր ՀՀ-ում են բնակվում մեկ տարի և ավել ժամկետով:
2. ՀՀ ՍԷԿՏ համակարգում առկա ԲՊՌ տվյալները պետք է համակարգված եղանակով տեղափոխել և պահպանել մշակվող նոր համակարգում: Ապահովել տվյալների թարմացումներն և փոփոխությունները առնվազն 24 ժամը մեկ:
3. Յուրաքանչյուր ՀՀ քաղաքացու համար պետք է կատարել սահմանահատումների վերլուծություն և տվյալներին ամրագրել նրա կողմից կատարած վերջին սահմանահատման ամսաթիվը և ուղղությունը (ըստ անցակետի): Առավել ճշգրիտ արդյունքներ ստանալու համար պետք է օգտվել ՍԷԿՏ համակարգում կիրառվող նույնականացման լուծումներից, որոնցով հնարավոր կլինի անձի տարբեր փաստաթղթերով իրականացված սահմանահատումները վերագրել միևնույն անձին:
4. ՀՀ քաղաքացիների համար ՍԷԿՏ համակարգում արդյունքները կարող են լինել.
- Քաղաքացին ունի սահմանահատում՝ ՀՀ մուտք կամ ելք:

Սահմանահատումների տվյալները պետք է դիտարկել 2013 թվականից հետո, քանի որ 2013 թվականից գործում է ՍԷԿՏ համակարգի վերջին տարբերակը, որը թույլատրում է հստակ ամրագրել սահմանահատման կարգավիճակը: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ ՍԷԿՏ համակարգը ներդրվել է փուլ առ փուլ և ավարտվել է 2011 թվականի օգոստոսի 7-ին:
Քաղաքացին չունի սահմանահատում:
Տվյալ դեպքում անհրաժեշտ է իրականացնել ստուգումներ, պարզելու արդյոք ՀՀ քաղաքացին կատարել է որևէ գործողություն, որն արձանագրվել է ՀՀ վարչական այլ ռեգիստրներից մեկում, մասնավորապես՝
1) եթե քաղաքացին ստացել է ՀՀ նույնականացման քարտ, ապա նա գտնվում է ՀՀ-ում,
2) եթե ՀՀ ԱԳՆ էլեկտրոնային շտեմարանում (կտրամադրվեն լրացուցիչ) առկա են ՀՀ քաղաքացու անձնագրային գործարքներ (նոր անձնագրի տրամադրում, վավերականության երկարացում, ՀՀ-ից ելքի ժամկետի փոփոխում և այլն), ապա քաղաքացին գտնվում է ՀՀ-ից դուրս,
3) 2013թ. հետո ՀՀ ոստիկանության ԱՎՎ ստորաբաժանումներում կատարել է անձնագրային գործարքներ և չի համապատասխանում սույն կետի 2-րդ ենթակետի պայմաններին, ապա նա գտնվում է ՀՀ-ում,
4) եթե անձնագիրը տրվել է 2012-2014թթ. ընթացքում 001-ի և 099-ի կողմից և չի համապատասխանում սույն կետի 2-րդ ենթակետի պայմաններին, ապա նա գտնվում է ՀՀ-ում,
5) 074 կոդով տրված փաստաթղթերը տրամադրվել են ՀՀ-ից դուրս գտնվող անչափահասներին,
6)200-ից բարձր կոդով տրված փաստաթղթերը տրամադրվել են ՀՀ-ից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիներին,
7) եթե քաղաքացու անձնագրով չի իրականացվել սույն կետի վերը նշված գործողություններից որևէ մեկը, ապա հնարավորության դեպքում ստուգել վարչական այլ ռեգիստրներով՝ նոտարական, կադաստրային կամ ՔԱԳՎ գործարքներ, որոնք իրականացվել են 2013թ.-ից հետո: Դրական արդյունքի դեպքում քաղաքացին գտնվում է ՀՀ-ում (անհրաժեշտ է հաշվի առնել արխիվացման ենթակա տվյալները, օրինակ՝ քաղաքացիության փոփոխում, մահ և այլն):
8)Հնարավորության դեպքում դիտարկել այլ ճշգրտման միջոցներ, օրինակ՝ քաղաքացին կատարել է բանկային գործարք, ստացել է թոշակ, բերման է ենթարկվել Ոստիկանություն և այլն:

ՀՀ ԲՊՌ-ՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Համակարգի մշակման II փուլ

5. I փուլի աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է կարգաբերել, ինչպես նաև լրացնել ԲՊՌ-ից ՍԷԿՏ համակարգ փոխանցվող հետևյալ տվյալները.

- ԲՊՌ-ում կարգավորել միևնույն անձանց կրկնակի հասցեներում գրանցումների դեպքերը,
- Արտերկրում ՀՀ ԱԳՆ հյուպատոսարաններից և դիվանագիտական ներկայացչություններից ստացված անձնագրային գործարքների դեպքում, որոնք ներկայումս իրականացվում են ՀՀ ոստիկանության ԱՎՎ 001-ի կողմից, ԲՊՌ-ում անհրաժեշտ է կատարել ծրագրային փոփոխություն՝ լրացուցիչ նշումներ (օրինակ Ֆրանսիա, Մարսել) կատարելու և ՍԷԿՏ համակարգ փոխանցելու նպատակով,
- ՍԷԿՏ համակարգ փոխանցել ՀԾՀ ունեցող, բայց անձնագիր չստացած ՀՀ քաղաքացիների տվյալները,
- ՍԷԿՏ համակարգին փոխանցել ՀՀ-ից ելք կատարելու թույլտվության (ելքի կլոր կնիքների) վերաբերյալ տեղեկատվությունը:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Համակարգի մշակման III փուլ

6. Նախորդ՝ 1-5 կետերը, իրականացնելուց հետո կստացվի նոր կառուցվածքի տվյալների բազա, որը կպարունակի օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիների տվյալները՝ նրանց վերջին սահմանահատումները, ուղղությունները, ինչից ելնելով նաև ՀՀ-ում գտնվելու կարգավիճակը:
7. ՍԷԿՏ համակարգում պահանջվող պարբերականությամբ վերլուծելով օտարերկրացիների տվյալները, ովքեր մուտք են գործել ՀՀ և բնակվում են մեկ տարի և ավել, համակարգված եղանակով տվյալները տեղափոխել և պահպանել նոր համակարգում:
8. Իրական ժամանակում կամ պահանջվող պարբերականությամբ (օրինակ՝ օրական առնվազը մեկ անգամ) ապահովել ԱՎՎ-ից տվյալների թարմացումը մշակվող համակարգին:
9. Իրական ժամանակում կամ պահանջվող պարբերականությամբ ՍԷԿՏ համակարգի նույնականացման լուծումներից օգտվելով ապահովել վերջին սահմանահատումների տվյալները, որոնք պետք է՝

1) թարմացվեն ՀՀ քաղաքացիների սահմանահատումների տվյալները՝ հիմք ընդունելով ՀԾՀ-ն,
2) օտարերկրացիների տվյալներն՝ ըստ ՍԷԿՏ համակարգում նրանց կցվող PersonID-ների,
3) եթե օտարերկրացին ելք է կատարել ՀՀ-ից, ապա պետք է «հեռացնել» (արխիվացնել) նրա տվյալները բազայից:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համակարգի մշակման IV փուլ

10. Համակարգը կառուցել բազմամակարդակ տվյալների բազայի (Business Inteligence) հենքի վրա՝ հետագայում տարբեր տեսակի վիճակագրություններ ստանալու նպատակով (համակարգին ճկունություն ապահովելու համար):
11. Ապահովել բնակչության մասին վիճակագրական հաշվետվությունների ստացումն ըստ՝ անհրաժեշտ սեռատարիքային բաշխման, ՀՀ վարչատարածքային միավորների, մեկ տարի և ավել ժամկետով բացակայող ՀՀ քաղաքացիների, մեկ տարի և ավել ժամկետով ՀՀ-ում բնակվող օտարերկրացիների (և այլն) վերաբերյալ, որոնց ձևաչափերը կտրամադրվեն լրացուցիչ (20 հաշվետվություն):
12. Ապահովել ՀՀ քաղաքացիների ՀՀ-ում բնակվելու կարգավիճակի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների ստացումն՝ ըստ մարզերի և ՀՀ վարչատարածքային միավորների, կամ ընդհանուր ընտրանքի հնարավորությամբ, որոնց ձևաչափերը կտրամադրվեն լրացուցիչ:
13. Մշակել հնարավորություն վերլուծության արդյունքները տպելու և CSV /ՍիԷսՎի/ (կամ այլ կառուցվածքային) ձևաչափով դուրս բերելու համար:
14. Մշակել ծրագրային միջոց, որը թույլ կտա համակարգից ստանալ ՀՀ քաղաքացիների վերաբերյալ անվանական ցանկեր՝ MS-Excel /էմԷս-էքսել/ (կամ տպելու) ձևաչափով, ըստ գրանցման հասցեների՝ ընտրանքային հետազոտություն անցկացնելու համար: Ցանկերը ստանալու համար ծրագիրը պետք է թույլատրի կիրառել համայնքի, սեռի, տարիքի, ՀՀ-ում բնակվելու կարգավիճակի և այլ չափորոշիչների ընտության հնարավորություն:
15. Մշակել հնարավորություն (ծրագրային մոդուլ) նախորդ կետով համակարգից դուրս բերված ցանկերով իրականացված ընտրանքային հետազոտության՝ անհատապես կատարված հարցումային աշխատանքների արդյունքները/ցուցանիշները կիրառել ամբողջ համակարգի տվյալների վրա:
16. Ապահովել մեկից ավել գերատեսչություններին տարբեր հաշվետվություններից օգտվելու հնարավորություններ (ցանկը և լիազորությունները կտրամադրվեն լրացուցիչ):

17. Ապահովել համակարգում իրականացվող գործողությունների լոգավորումը և դրանց մատչելի վերծանման հնարավորությունը:
18. Ապահովել իրական ժամանակում ցուցանիշների վահանակի ստեղծում (dashboard), մինչև 10 ցուցանիշ՝ հանրությանը ներկայացնելու համար, ցուցանիշները համակարգի ստեղծման ընթացքում պետք է գրավոր համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

18. Մարդահամարի հաշվառման համակարգը առանձին սերվերի վրա (կամ վիրտուալ տարածքում) անհրաժեշտ ծրագրային ապահովման միջոցներով համալրված համակարգ է:
19. Տեղեկատվական համակարգի սերվերին հասանելիություն կարող է ապահովել առանձնացված կապուղիների միջոցով: Անհրաժեշտության դեպքում հնարավորություն ընձեռնել կապուղիներում կիրառել տվյալների գաղտնագրման ալգորիթմներ:
20. Մշակվող տեղեկատվական համակարգը պետք է ապահովի հավաքագրվող և փոխանակվող տվյալների ամբողջականությունը և անվտանգությունը, իրականացված վերլուծությունների պահպանումը:
21. Ապահովել տեղեկատվական համակարգի տվյալների արխիվացումը և պահպանումը:
22. Համակարգի ներդրումից հետո անհրաժեշտ է 12 ամսվա ընթացքում ապահովել երաշխիքային սպասարկում, ինչի շրջանակներում կարող են պահանջվել ծրագրային փոփոխություններ (լրամշակումներ), հայտնաբերված թերությունների վերացում, որոնք պետք է իրականացվեն առանց հավելյալ ֆինանսական միջոցների պահանջի:
23. Ստեղծվող ենթահամակարգի և դրան համակցված համակարգերի տվյալների և ծառայությունների փոխանակումը/փոխանցումը/տրամադրումը պետք է համապատասխանեցվի ՀՀ կառավարության 2015թ. թիվ 1093-Ն որոշման պահանջներին:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

24. Համակարգի կառուցման առավելագույն ժամկետը 90 օրացուցային օր է:
25. Կատարողը պետք է ներկայացնի համակարգի կառուցման վերոնշյալ բոլոր փուլերի ժամանակային գնահատականը՝ օրացուցային օրերի քանակով, ինչպես նաև Պատվիրատուին պետք է ներկայացնի հաշվետվություն կատարված աշխատանքների մասին յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

26. Կատարողը պարտավոր է տալ հայտարարություն առ այն, որ իրավունք չունի հրապարակելու պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կարիքների համար ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել 6 (վեց) մասնակիցներ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 24.02.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ վիճակագրական կողմից ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված է հետևյալը.

Տեխնիկական բնութագիրը
Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարդահամարի հաշվառման և վիճակագրական հաշվետվությունների ստացման **<u>Ծրագրային ապահովման մշակման ծառայություններ</u>** ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) և Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի սահմանահատումների տվյալների համադրման և արդյունքների վերլուծության միջոցով Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարդահամարի անցկացման և բնակչության քանակի հաշվառման տեղեկատվական համակարգի նպատակն է ապահովել ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N1115-Ն որոշման պահանջները՝ 2020 թվականին ՀՀ-ում հերթական մարդահամարի անցկացումը, իսկ հետագայում՝ իրական ժամանակում, ապահովել Հայաստանի բնակչության մասին ճշգրիտ և մանրամասն տեղեկատվության ստացումը: Համակարգի մշակման արդյունքում պետք է հնարավոր լինի օրվա դրությամբ ճշգրիտ գնահատել ՀՀ-ում գտնվող բնակչության՝ ՀՀ քաղաքացիների և օտարերկրացիների, քանակական ցուցանիշները, այդ թվում ԲՊՌ-ում առկա անվանական տվյալներն ըստ սեռատարիքային բաշխվածության: **<u>ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u>** Հայաստանի Հանրապետությունում մարդահամարի անցկացման և բնակչության հաշվառման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել ծրագրային ու սերվերային միջոցներից կազմված համակարգ, որը ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) տվյալները համադրելով ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի սահմանահատումների տվյալների հետ պետք է ապահովի. ՀՀ քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ցուցակ և համապատասխան վիճակագրական տվյալներ՝ ըստ տեղաշարժվող բնակչության վերջին սահմանահատման ամսաթվի և ուղղության, ելքային սահմանահատողների դեպքում՝ ՀՀ-ից ելքի ժամկետի (մարդահամարի հաշվառման պահի դրությամբ բացակայության տևողության), Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ցուցակ և համապատասխան վիճակագրական տվյալներ՝ ըստ ՀՀ մուտքի վերջին սահմանահատման ամսաթվի, ուղղության, մարդահամարի հաշվառման պահի դրությամբ՝ ՀՀ-ում գտնվելու տևողության, ՍԷԿՏ համակարգից տեղեկատվություն այն օտարերկրացիների վերաբերյալ, ովքեր

մարդահամարի հաշվառման պահի դրությամբ գտնվում են ՀՀ-ում մեկ տարի կամ Համակարգի օգտվողների կողմից սահմանված այլ ժամանակահատվածում (0-≤3, 3-12, ≥12 և այլն), Վարչական այլ տեղեկատվական շտեմարանների (ՀՀ ԱԳՆ, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱՆ ՔԿԱԳ և այլ) տվյալների կիրառությամբ իրական ժամանակում հստակեցնել ԲՊՌ-ում հաշվառված, սակայն ՍԷԿՏ համակարգում սահմանահատում չունեցող ՀՀ քաղաքացիների ՀՀ-ում գտնվելու/բացակայելու կարգավիճակը՝ մինչ 2020թ. հոկտեմբերի 18-ը (00 ժամի դրությամբ): Այն քաղաքացիների ցուցակը, ում ՀՀ-ում գտնվելու/բացակայելու կարգավիճակը՝ մինչ 2020թ. հոկտեմբերի 18-ը (00 ժամի դրությամբ) անորոշ է: Պետք է ապահովվի կարգավիճակի ճշգրտման պարագայում (սահմանահատման փաստ, կամ որևէ այլ գործողություն, որը թույլ է տալիս հստակեցնել կարգավիճակը, օրինակ նոր անձնագրի ստացում ՀՀ տարածքում կամ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունում և այլն), դրա ինքնաշխատ եղանակով շտկումը համակարգում: Մարդահամարի հաշվառման կամ Համակարգի օգտվողների կողմից սահմանված այլ պահի դրությամբ՝ Բնակչության պետական ռեգիստրի տվյալները (անձի նույնականացման ծածկագիր՝ ՀԾՀ, անուն, ազգանուն, հայրանուն, կարգավիճակ, քաղաքացիության երկիր, ծննդյան օր, ամիս, տարի, ծննդավայր, սեռ, ազգությունը) համադրելով ՍԷԿՏ համակարգում կուտակվող սահմանահատումների տվյալների հետ, պետք է ապահովեն ՀՀ-ում բնակչության ընթացիկ վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացումը:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Մշտական բնակչության թվաքանակը. ներառում է Համակարգի օգտվողների կողմից սահմանված ամսաթվի դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) տվյալ բնակավայրում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և մինչև մեկ տարի ժամկետով բացակայող անձանց թվաքանակը:
Առկա բնակչության թվաքանակը. ներառում է Համակարգի օգտվողների կողմից սահմանված ամսաթվի դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) տվյալ բնակավայրում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և ժամանակավոր (մինչև մեկ տարի ժամկետով) ներկա անձանց թվաքանակը:
Ժամանակավոր բացակա բնակչություն են համարվում՝ մարդահամարի հաշվառման պահի դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) իրենց հիմնական (մշտական) բնակության վայրից մինչև մեկ տարի ժամկետով բացակայողները:
Ժամանակավոր ներկա բնակչություն են համարվում մարդահամարի հաշվառման պահի դրությամբ (հոկտեմբերի 17-ի լույս 18-ի կեսգիշեր) տվյալ վայրում ոչ ավել քան մեկ տարի ժամկետով ներկա գտնվողները, ովքեր մշտապես չեն բնակվողում տվյալ վայրում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՒԼԵՐԻ

Համակարգի մշակման I փուլ

5.ՀՀ-ում մարդահամարի վերաբերյալ վիճակագրական տվյալներ ստանալու նպատակով անհրաժեշտ է ՍԷԿՏ համակարգի շրջանակներում մշակել առանձին տեղեկատվական համակարգ (ենթահամակարգ)՝ ծրագրային ապահովման միջոց, որը ՀՀ քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում, համադրելով ՍԷԿՏ համակարգի սահմանահատումները ԲՊՌ-ում առկա տվյալների հետ, կցուցադրի Հայաստանում գտնվող ՀՀ բնակչության վերաբերյալ թվերը և այլ տվյալները՝ առանձնացնելով մեկ տարի և ավել բացակայողների տվյալները, իսկ օտարերկրացիների դեպքում՝ վերլուծելով ՍԷԿՏ համակարգում առկա օտարերկրացիների սահմանահատումները, կցուցադրի օտարերկրացիների ցուցակը և թվաքանակը՝ առանձնացնելով այն օտարերկրացիներին, ովքեր ՀՀ-ում են բնակվում մեկ տարի և ավել ժամկետով:
6.ՀՀ ՍԷԿՏ համակարգում առկա ԲՊՌ տվյալները պետք է համակարգված եղանակով տեղափոխել և պահպանել մշակվող նոր համակարգում: Ապահովել տվյալների թարմացումներն և փոփոխությունները առնվազն 24 ժամը մեկ:
7.Յուրաքանչյուր ՀՀ քաղաքացու համար պետք է կատարել սահմանահատումների վերլուծություն և տվյալներին ամրագրել նրա կողմից կատարած վերջին սահմանահատման ամսաթիվը և ուղղությունը (ըստ անցակետի): Առավել ճշգրիտ արդյունքներ ստանալու համար պետք է օգտվել ՍԷԿՏ համակարգում կիրառվող նույնականացման լուծումներից, որոնցով հնարավոր կլինի անձի տարբեր փաստաթղթերով իրականացված սահմանահատումները վերագրել միևնույն անձին:
8.ՀՀ քաղաքացիների համար ՍԷԿՏ համակարգում արդյունքները կարող են լինել.
- Քաղաքացին ունի սահմանահատում՝ ՀՀ մուտք կամ ելք:
Սահմանահատումների տվյալները պետք է դիտարկել 2013 թվականից հետո, քանի որ 2013 թվականից գործում է ՍԷԿՏ համակարգի վերջին տարբերակը, որը թույլատրում է հստակ ամրագրել սահմանահատման կարգավիճակը: Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ ՍԷԿՏ համակարգը ներդրվել է փուլ առ փուլ և ավարտվել է 2011 թվականի օգոստոսի 7-ին:
Քաղաքացին չունի սահմանահատում:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է իրականացնել ստուգումներ, պարզելու արդյոք ՀՀ քաղաքացին կատարել է որևէ գործողություն, որն արձանագրվել է ՀՀ վարչական այլ ռեգիստրներից մեկում, մասնավորապես՝

9) եթե քաղաքացին ստացել է ՀՀ նույնականացման քարտ, ապա նա գտնվում է ՀՀ-ում,

10) եթե ՀՀ ԱԳՆ էլեկտրոնային շտեմարանում (կտրամադրվեն լրացուցիչ) առկա են ՀՀ քաղաքացու անձնագրային գործարքներ (նոր անձնագրի տրամադրում, վավերականության երկարացում, ՀՀ-ից ելքի ժամկետի փոփոխում և այլն), ապա քաղաքացին գտնվում է ՀՀ-ից դուրս,

11) 2013թ. հետո ՀՀ ոստիկանության ԱՎՎ ստորաբաժանումներում կատարել է անձնագրային գործարքներ և չի համապատասխանում սույն կետի 2-րդ ենթակետի պայմաններին, ապա նա գտնվում է ՀՀ-ում,

12) եթե անձնագիրը տրվել է 2012-2014թթ. ընթացքում 001-ի և 099-ի կողմից և չի համապատասխանում սույն կետի 2-րդ ենթակետի պայմաններին, ապա նա գտնվում է ՀՀ-ում,

13) 074 կոդով տրված փաստաթղթերը տրամադրվել են ՀՀ-ից դուրս գտնվող անչափահասներին,

14) 200-ից բարձր կոդով տրված փաստաթղթերը տրամադրվել են ՀՀ-ից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիներին,

15) եթե քաղաքացու անձնագրով չի իրականացվել սույն կետի վերը նշված գործողություններից որևէ մեկը, ապա հնարավորության դեպքում ստուգել վարչական այլ ռեգիստրներով՝ նոտարական, կադաստրային կամ ՔԱԳՎ գործարքներ, որոնք իրականացվել են 2013թ.-ից հետո: Դրական արդյունքի դեպքում քաղաքացին գտնվում է ՀՀ-ում (անհրաժեշտ է հաշվի առնել արխիվացման ենթակա տվյալները, օրինակ՝ քաղաքացիության փոփոխում, մահ և այլն):

16) Հնարավորության դեպքում դիտարկել այլ ճշգրտման միջոցներ, օրինակ՝ քաղաքացին կատարել է բանկային գործարք, ստացել է թոշակ, բերման է ենթարկվել Ոստիկանություն և այլն:

ՀՀ ԲՊՌ-ՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Համակարգի մշակման II փուլ

19. I փուլի աշխատանքներին զուգահեռ անհրաժեշտ է կարգաբերել, ինչպես նաև լրացնել ԲՊՌ-ից ՍԷԿՏ համակարգ փոխանցվող հետևյալ տվյալները.

- ԲՊՌ-ում կարգավորել միևնույն անձանց կրկնակի հասցեներում գրանցումների դեպքերը,
- Արտերկրում ՀՀ ԱԳՆ հյուպատոսարաններից և դիվանագիտական ներկայացչություններից ստացված անձնագրային գործարքների դեպքում, որոնք ներկայումս իրականացվում են ՀՀ ոստիկանության ԱՎՎ 001-ի կողմից, ԲՊՌ-ում անհրաժեշտ է կատարել ծրագրային փոփոխություն՝ լրացուցիչ նշումներ (օրինակ Ֆրանսիա, Մարսել) կատարելու և ՍԷԿՏ համակարգ փոխանցելու նպատակով,
- ՍԷԿՏ համակարգ փոխանցել ՀԾՀ ունեցող, բայց անձնագիր չստացած ՀՀ քաղաքացիների տվյալները,
- ՍԷԿՏ համակարգին փոխանցել ՀՀ-ից ելք կատարելու թույլտվության (ելքի կլոր կնիքների) վերաբերյալ տեղեկատվությունը:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Համակարգի մշակման III փուլ

20. Նախորդ՝ 1-5 կետերը, իրականացնելուց հետո կստացվի նոր կառուցվածքի տվյալների բազա, որը կպարունակի օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիների տվյալները՝ նրանց վերջին սահմանահատումները, ուղղությունները, ինչից ելնելով նաև ՀՀ-ում գտնվելու կարգավիճակը:
21. ՍԷԿՏ համակարգում պահանջվող պարբերականությամբ վերլուծելով օտարերկրացիների տվյալները, ովքեր մուտք են գործել ՀՀ և բնակվում են մեկ տարի և ավել, համակարգված եղանակով տվյալները տեղափոխել և պահպանել նոր համակարգում:
22. Իրական ժամանակում կամ պահանջվող պարբերականությամբ (օրինակ՝ օրական առնվազը մեկ անգամ) ապահովել ԱՎՎ-ից տվյալների թարմացումը մշակվող համակարգին:
23. Իրական ժամանակում կամ պահանջվող պարբերականությամբ ՍԷԿՏ համակարգի նույնականացման լուծումներից օգտվելով ապահովել վերջին սահմանահատումների տվյալները, որոնք պետք է՝

4) թարմացվեն ՀՀ քաղաքացիների սահմանահատումների տվյալները՝ հիմք ընդունելով ՀԾՀ-ն,

5) օտարերկրացիների տվյալներն՝ ըստ ՍԷԿՏ համակարգում նրանց կցվող PersonID-ների,

6) եթե օտարերկրացին ելք է կատարել ՀՀ-ից, ապա պետք է «հեռացնել» (արխիվացնել) նրա տվյալները բազայից:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համակարգի մշակման IV փուլ

24. Համակարգը կառուցել բազմամակարդակ տվյալների բազայի (Business Inteligence) հենքի վրա՝ հետագայում տարբեր տեսակի վիճակագրություններ ստանալու նպատակով (համակարգին ճկունություն ապահովելու համար):
25. Ապահովել բնակչության մասին վիճակագրական հաշվետվությունների ստացումն ըստ՝ անհրաժեշտ սեռատարիքային բաշխման, ՀՀ վարչատարածքային միավորների, մեկ տարի և ավել ժամկետով բացակայող ՀՀ քաղաքացիների, մեկ տարի և ավել ժամկետով ՀՀ-ում բնակվող օտարերկրացիների (և այլն) վերաբերյալ, որոնց ձևաչափերը կտրամադրվեն լրացուցիչ (20 հաշվետվություն):
26. Ապահովել ՀՀ քաղաքացիների ՀՀ-ում բնակվելու կարգավիճակի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների ստացումն՝ ըստ մարզերի և ՀՀ վարչատարածքային միավորների, կամ ընդհանուր ընտրանքի հնարավորությամբ, որոնց ձևաչափերը կտրամադրվեն լրացուցիչ:
27. Մշակել հնարավորություն վերլուծության արդյունքները տպելու և CSV /ՍիԷսՎի/ (կամ այլ կառուցվածքային) ձևաչափով դուրս բերելու համար:
28. Մշակել ծրագրային միջոց, որը թույլ կտա համակարգից ստանալ ՀՀ քաղաքացիների վերաբերյալ անվանական ցանկեր՝ MS-Excel /Էմ Էս-Էքսել/ (կամ տպելու) ձևաչափով, ըստ գրանցման հասցեների՝ ընտրանքային հետազոտություն անցկացնելու համար: Ցանկերը ստանալու համար ծրագիրը պետք է թույլատրի կիրառել համայնքի, սեռի, տարիքի, ՀՀ-ում բնակվելու կարգավիճակի և այլ չափորոշիչների ընտության հնարավորություն:
29. Մշակել հնարավորություն (ծրագրային մոդուլ) նախորդ կետով համակարգից դուրս բերված ցանկերով իրականացված ընտրանքային հետազոտության՝ անհատապես կատարված հարցումային աշխատանքների արդյունքները/ցուցանիշները կիրառել ամբողջ համակարգի տվյալների վրա:
30. Ապահովել մեկից ավել գերատեսչություններին տարբեր հաշվետվություններից օգտվելու հնարավորություններ (ցանկը և լիազորությունները կտրամադրվեն լրացուցիչ):
31. Ապահովել համակարգում իրականացվող գործողությունների լոգավորումը և դրանց մատչելի վերծանման հնարավորությունը:
32. Ապահովել իրական ժամանակում ցուցանիշների վահանակի ստեղծում (dashboard), մինչև 10 ցուցանիշ՝ հանրությանը ներկայացնելու համար, ցուցանիշները համակարգի ստեղծման ընթացքում պետք է գրավոր համաձայնեցվեն Պատվիրատուի հետ:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

27. Մարդահամարի հաշվառման համակարգը առանձին սերվերի վրա (կամ վիրտուալ տարածքում) անհրաժեշտ ծրագրային ապահովման միջոցներով համալրված համակարգ է:
28. Տեղեկատվական համակարգի սերվերին հասանելիություն կարող է ապահովել առանձնացված կապուղիների միջոցով: Անհրաժեշտության դեպքում հնարավորություն ընձեռնել կապուղիներում կիրառել տվյալների գաղտնագրման ալգորիթմներ:
29. Մշակվող տեղեկատվական համակարգը պետք է ապահովի հավաքագրվող և փոխանակվող տվյալների ամբողջականությունը և անվտանգությունը, իրականացված վերլուծությունների պահպանումը:
30. Ապահովել տեղեկատվական համակարգի տվյալների արխիվացումը և պահպանումը:
31. Համակարգի ներդրումից հետո անհրաժեշտ է 12 ամսվա ընթացքում ապահովել երաշխիքային սպասարկում, ինչի շրջանակներում կարող են պահանջվել ծրագրային փոփոխություններ (լրամշակումներ), հայտնաբերված թերությունների վերացում, որոնք պետք է իրականացվեն առանց հավելյալ ֆինանսական միջոցների պահանջի:
32. Ստեղծվող ենթահամակարգի և դրան համակցված համակարգերի տվյալների և ծառայությունների փոխանակումը/փոխանցումը/տրամադրումը պետք է համապատասխանեցվի ՀՀ կառավարության 2015թ. թիվ 1093-Ն որոշման պահանջներին:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

33. Համակարգի կառուցման առավելագույն ժամկետը 90 օրացուցային օր է:
34. Կատարողը պետք է ներկայացնի համակարգի կառուցման վերոնշյալ բոլոր փուլերի ժամանակային գնահատականը՝ օրացուցային օրերի քանակով, ինչպես նաև Պատվիրատուին պետք է ներկայացնի հաշվետվություն կատարված աշխատանքների մասին յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ անգամ:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

35. Կատարողը պարտավոր է տալ հայտարարություն առ այն, որ իրավունք չունի հրապարակելու պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը:

www.armeps.am կայքում առկա տվյալների համաձայն՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կարիքների համար ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել 6 (վեց) մասնակիցներ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և

համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ախտորոշման սարքերի ձեռքբերման նպատակով 18.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռքբերվող ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն նման բնութագրեր սահմանելով ապահովել է մրցակցության հավասար պայմաններ՝ հնարավոր մասնակիցների համար, որի արդյունքում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ գնումների գործընթացում չի առաջացվել: Բացի այդ նման բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը, որոնց էլ մասնակցության հայտ են ներկայացրել 6 (վեց) մասնակիցներ:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ

լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերաբերելի ապացույց առ այն, որ Պատվիրատուի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտած լինելու փաստը, այն, որ սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները խոչընդոտում են հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջները հիմնավոր են և չեն սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ Պատվիրատուի կողմից ներկայացված բողոքի առարկություններով հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարումը և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների առկայությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում առկա չէ, ինչը կարող էր հանգեցնել տեխնիկական բնութագրերով սահմանված պայմանների փոփոխմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 24.02.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/31 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ